ՀԱՂՈՐԴԱԳԻՐ

Հայաստանում ԵՄ Թվինինգ ծրագիր վիճակագրության ոլորտում (փուլ II)

Ծրագրի 6-րդ եռամսյակ

Եռամսյակային հաղորդագիր՝ հրապարակված ԵՄ կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – 2-րդ փուլ» Թվինինգ ծրագրի ԹՄԽ գրասենյակի կողմից

Սա ԵՄ *«Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – 2-րդ փուլ»* Թվինինգ ծրագրի վեցերորդ հաղորդագիրն է:

Ծրագրի 6-րդ եռամսյակի ընթացքում իրականացվել են հետևյալ գործողությունները.

Տարածման և որակի վիճակագրություն.
Կայքի բարելավմանը նվիրված այս երկրորդ առաքելությանը քննարկվեցին տարբեր հարցեր: Դրանց շարքում էին Armstat.am կայքի կառուցվածքի փոփոխությունները, ընթացիկ վեր հարթակի բարելավումները, սպառողների հետ հաղորդակցությունը և նրանց կողմից հետադարձ կապը: Նաև քննարկվեց, թե ինչպես բարելավել Armstatbank.am-ը՝ աղյուսակների անունները դասավորելու, կայքը բոլոր վեբ բրաուզերներում հասանելի դարձնելու, և տվյալները ներկայացնող քարտեզներ ներդնելու միջոցով: Ներքին կարգով ներկայացվել է Armstat.am-ի նոր կառուցվածքի նախատիպ, որը կմշակվի մինչ հաջորդ առաքելությունը:

Ժողովրդագրական վիճակագրություն. Ուսուցողական այց Լիտվա.
Ուսուցողական այցը լավ էր կազմակերպված և արդյունավետ էր: Մասնակիցները փոխանակեցին բնակչության, ծնելիության, մահացության և միգրացիոն վիճակագրության արտադրման հետ կապված լավագույն փորձը: Քննարկումները նաև ընդգրկեցին հարցեր կապված ժողովրդագրական և միգրացիոն վիճակագրության արտադրման համար բնակչության ռեգիստրներից և տվյալների այլ վարչական աղբյուրներից տվյալների օգտագործման հետ: Հանդիպումներին մասնակցեցին նաև Լիտվայի արտաքին շահառուներ, ինչը արժեքավոր ներդրում էր ուսուցողական այցին:

Ժողովրդագրական վիճակագրություն (միգրացիա).
Այս վերջնական առաքելությանը, որը նվիրված էր միայն միգրացիոն վիճակագրությանը, քննարկումները վերաբերում էին արդիականացված մեթոդաբանությանը, Հայաստանում միջազգային միգրացիոն վիճակագրության արտադրման համար տեխնիկական մասնագրին, SS հիմնահարցերին և առհասարակ ինչպես միգրացիոն վիճակագրությունն առավել արդյունավետ դարձնել:
Վարչական տվյալների օգտագործման վերաբերյալ փորձագետների առաջարկությունները պահանջում են ստանդարտացված ներքին տեղեկատվական հոսք ճյուղային բաժինների և SS վարչության միջև, վարչական տվյալներ տիրապետողների հետ հետագա համագործակցություն, աշխատակիցների վերապատրաստում, առավել շատ միգրացիոն տվյալների ներկայացում տարեկան հրապարակումներում և միգրացիոն վիճակագրության կառուցվածքային ներկայացում:

Աշխատանքային իրավիճակներ ծրագրի 6-րդ եռամսյակի ընթացքում

Ջրի հաշիվներ.
Հայաստանում ջրի հաշիվների գծով երրորդ առաքելության նպատակն էր վերահսկել նախորդ առաքելությունից ի վեր կատարված աշխատանքը, և շարունակել աշխատել ջրի հաշիվները կազմելու ուղղությամբ, և քննարկել, թե ինչպես դրանք ինտեգրել ազգային հաշիվների մեջ՝ համապատասխան շահառուների ներգրավմամբ: Առաքելության ընթացքում մշակվեցին ջրամատակարարման և ջրօգտագործման հիբրիդային աղյուսակների տեսական և գործնական ասպեկտները: Համագործակցությունը ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի հետ շատ արդյունավետ էր և պատրաստվեց ջրի հաշիվների ֆինանսական բաղադրիչը: Բաղադրիչի հետագա աշխատանքը նաև կենտրոնացված կլինի տվյալների տարածման վրա մի ձևաչափով, որը կարտացոլի սպառողների և ազգային շահառուների կարիքները:
Ծրագրի առաջխաղացման հետ միաժամանակ համապատասխան փաստաթղթերը և նյութերը բեռնվում են ծրագրի կայքում հայերեն և անգլերեն: Ծրագիրն ունի նաև կանոնավոր կերպով թարմացվող ֆեյսբուքյան էջ, որին հղում է տրված կայքում: Տեսեք դրանք ներքևում:

Ծրագրի 7-րդ եռամսյակի ընթացքում նախատեսված է 6 գործողություն Հայաստանում: Նաև կլինի ուսուցողական այց Դանիա՝ ժողովրդագրական վիճակագրության գծով վարչական տվյալների հետ աշխատելու համար SS կարողությունների վերաբերյալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար.
Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն (ԹՄԽ)
pah@dst.dk
Հեռ. + 374(0)99077916
Կայք-էջ.www.dst.dk/armenia2015
Ֆեյսբուքյան էջ.www.facebook.com/EU-Armenia-Twinning-Project-on-Statistics-II-801732856606449

Թվինինգ ծրագրի հիմնական թեմաները

1. Տարածում և վիճակագրության որակ
Վիճակագրական տեղեկատվության տարածման բարելավված համակարգ, մշակված տեղեկատվության տարածման համակարգի ռազմավարություն, սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացված, փորձարկված և հրապարակված հարցաթերթ, առաջարկություններ որակի կառավարման ապահովման վերաբերյալ
2. Ժողովրդագրական վիճակագրություն
Բարելավված կենսական և միգրացիոն վիճակագրություն, տվյալների հավաքագրման բարելավված մեխանիզմների ռազմավարություն (թղթային աղբյուրներից անցում վարչական ռեգիստրների)
3. Աշխատաշուկայի վիճակագրություն
Հաշվարկված և հրապարակված աշխատանքի գին, աշխատանքի գնի ինդեքս, ինչպես նաև վաստակի վերաբերյալ հաշվարկված և հրապարակված կառուցվածքային վիճակագրություն
4. Աղքատության վիճակագրություն
Սոցիալական բացառումների վիճակագրության ներդրում և հաշվարկում (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համագործակցությամբ)
5. Ինովացիոն գործունեության մասին վիճակագրություն
Ներդրված վիճակագրություն ինովացիոն գործունեության մասին, ինովացիոն գործունեության մասին վիճակագրության մշակված մեթոդաբանություն, կանոնավոր արտադրման և հրապարակման պլան
6. Ջրի հաշիվներ
Առանցքային շահառուների հետ ջրի հաշիվների մշակված մեթոդաբանություն, ջրի կազմված հաշիվներ

Այս ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է Դանիայի վիճակագրության կողմից՝Ֆինլանդիայի, Իտալիայի, Լիտվայիվիճակագրություններիհետհամատեղ:

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Սույն հրապարակման մեջ տեղ գտած տեսակետները հանդիսանում են Դանիայի վիճակագրության պատասխանատվությունը և կարող են չարտացոլել Եվրոպական միության տեսակետը: